ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 փետրվարի 2012թ. թիվ 57

ԱՄԱԼՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով և “Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի քննչական բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Թ.Շուշանյանի միջնորդագիրը և Ա.Բաղդասարյանի բացատրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. «Նորաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ամալյա Բաղդասարյանի նկատմամբ, նույն դպրոցի գիշերային պահակ Պարույր Բաղդասարյանի բացակայության ժամանակ նրա կնոջը 2011թ. ապրիլի 7-ից մինչև նոյեմբերի 17-ը ապօրինի վարձատրելու համար, կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն կարգադրությունը եռօրյա ժամկետում հանձնել Ամալյա Բաղդասարյանին՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. փետրվարի 17
ք.Վանաձոր